մասնավորապես, քաղաքացիական գործի ելքի համար նշանակություն ունեցող՝ փաստաբանի կողմից կատարված գործողությունների ծավալը, բարդության աստիճանը, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցիչը կազմել է հայցադիմում, հայցադիմումի պատասխան, ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը բավարարվել է, մինչդեռ ապացույցներ հավաքելու գործընթաց ըստ էության տեղի չի ունեցել, գործի քննությունը իրականացվել է գրավոր ընթացակարգով, դատական նիստեր չեն հրավիրվել, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ Հայցվորի շահերը Դատարանում ներկայացման համար, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ կարող է սահմանվել 100 000.00 ՀՀ դրամ գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից վերջինիս և <<Ագաստ>> ՍՊԸ-ի միջև 12.01.2024թ. կնքված թիվ <<ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04.12>> ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

1.1. անվավեր ճանաչել <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի 22.05.2024 թվականի <<Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին>> թիվ 05/236 ծանուցմամբ <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Ագաստ>> ՍՊԸ-ի միջև 12.01.2024 թվականին կնքված թիվ <<ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04.12>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումը:

2. <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<Ագաստ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<Ագաստ>> ՍՊԸ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումարը:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE25-94DD-4059-99BF հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am